



**ԵԱՀԿ**

Եվրոպայում անվտանգության և  
համագործակցության կազմակերպություն  
երնանկան գրասենյակ



**ԻՆՖՈՐՄԱՏԻՈՅԻ  
ԱԶՍՈՒԹՅԱՆ  
ԿԵՆՏՐՈՆ**



Ծրագիրը  
համաֆինանսավորվել է  
Եվրոպական միության  
կողմից

Ծրագիրը  
համաֆինանսավորվել է  
ԵԱՀԿ Երևանյան  
գրասենյակի կողմից

Իրականացնող՝  
Հայաստանի երիտասարդ  
իրավաբանների  
ասոցիացիա

Գործընկեր՝  
Ինֆորմացիայի  
ազատության  
կենտրոն

Իրականացնող՝  
«Իրազեկ և  
պաշտպանված  
սպառող» ՀԿ

## «Իրազեկ և պաշտպանված սպառող» հասարակական կազմակերպություն

### «Պետպատվերի շրջանակներում տրամադրվող դեղերի ոլորտում առկա խնդիրներն ու գործընթացի կոռուպցիոն ռիսկերը» ծրագրի վերջնական դրամաշնորհային հաշվետվություն

«Պետպատվերի շրջանակներում տրամադրվող դեղերի ոլորտում առկա խնդիրներն ու գործընթացի կոռուպցիոն ռիսկերը» ծրագիրը իրականացրել է «Իրազեկ և պաշտպանված սպառող» հասարակական կազմակերպությունը՝ «Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» հասարակական կազմակերպության և «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության համագործակցությամբ գործարկվող «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրով տրամադրված փոքր ենթադրամաշնորհների շրջանակներում: Ծրագրի բյուջեն կազմել է 1,090,000 ՀՀ դրամ, որից 940,000 ՀՀ դրամը տրամադրվել է «Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» հասարակական կազմակերպության կողմից: Ծրագրի տևողությունն էր՝ 2015թ.-ի մայիսի 1-ից մինչև 2015թ.-ի հուլիսի 31-ը:

«Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագիրը համաֆինանսավորվում է Եվրոպական միության և ԵԱՀԿ-ի կողմից:

## Վերջնական դրամաշնորհային հաշվետվություն

1. Կազմակերպության անվանումը՝ «Իրազեկ և պաշտպանված սպառող»
2. Դրամաշնորհի համաձայնագրի համարը՝ EU-2015/03
4. Ծրագրի անվանումը՝ «Պետպատվերի շրջանակներում տրամադրվող դեղերի ոլորտում առկա խնդիրներն ու գործընթացի կոռուպցիոն ռիսկերը»
5. Ծրագրի տևողությունը՝ 01.05.2015-31.07.2015

Ծրագրի իրականացման ընթացքում իրականացվել է ԶԼՄ-ների մոնիթորինգ, առանձնացվել են թեմային առնչվող հրապարակումները և արխիվացվել: Հրապարակումների վերլուծության և ընդհանուր ոլորտին առնչվող հարցերով գրավոր հարցում է ուղարկվել ՀՀ առողջապահության նախարարությանը պարզելու՝ ո՞ր դեղամիջոցներն են պետպատվերի շրջանակներում տրամադրվում ՀՀ քաղաքացիներին:

1. Ի՞նչ մեթոդաբանությամբ է իրականացվում ձեռքբերվող դեղամիջոցների քանակների հաշվարկը: Նշյալ հարցի տրամաբանությունը կայանում է նրանում, որ ընթացիկ տարում հիվանդների թիվը կարող է ավելանալ, և ըստ էության դեղորայքի պահանջարկը լինի ավելի շատ, քան ի սկզբանե ձեռք է բերվել պետության կողմից:
2. Եղե՞լ են արդյոք դեպքեր, երբ ընթացիկ տարում միևնույն դեղամիջոցի գնումն իրականացվել է տարբեր փուլերով և հանդիսացել տարբեր ընկերությունների արտադրանք: Եթե այո, ապա որո՞նք են պատճառները և ի՞նչ մեխանիզմով է իրականացվել բաշխումը: Նշյալ հարցի տրամաբանությունը կայանում է նրանում, որ տարբեր քաղաքացիներ կարող են ստանալ տարբեր ընկերության արտադրանք հանդիսացող միևնույն դեղամիջոցը և ըստ քաղաքացիների այն կարող է որակապես տարբեր լինել, հատկապես, եթե ինչ-ինչ պատճառներով (օրինակ՝ օրգանիզմի առանձնահատկություն) դեղամիջոցը չունենա այն ազդեցությունը, ինչը նախապես կանխատեսվում էր:
3. Արդյո՞ք միևնույն երկրի և միևնույն ընկերության արտադրանք հանդիսացող դեղամիջոցն է տրամադրվում մարզերում և Երևանում: Եթե ոչ, ապա ո՞րն է պատճառը:
4. Համաձայն մամուլում առկա տեղեկատվության մի խումբ քաղաքացիներ հրաժարվում են օգտագործել պետպատվերի շրջանակներում տրամադրվող

դեղամիջոցը: Ըստ նույն քաղաքացիների նրանց մի մասն ուղղակի դեղամիջոցը չի վերցնում, իսկ մյուս մասը վերցնում և տրամադրում է վերջինիս կարիքն ունեցող այլ անձանց: Ի՞նչ է տեղի ունենում այն դեղորայքի հետ, որից քաղաքացին հրաժարվում է, և եթե քաղաքացին դեղամիջոցը տրամադրում է այլ անձանց և միևնույն անձը ստանում է դեղամիջոցի կրկնակի դոզա, արդյո՞ք վերջինս չի կարող բացասական ազդեցություն ունենալ:

5. Ո՞ր դեղամիջոցներն են ՀՀ-ին տրամադրվում մարդասիրական որևէ օգնության շրջանակներում: Մարդասիրական օգնության շրջանակներում տրամադրվող դեղամիջոցները բավարարում են արդյո՞ք դեղամիջոցների կարիքն ունեցող բոլոր քաղաքացիներին, եթե ոչ, կա՞ն արդյոք դեղամիջոցներ, որոնց մի մասը տրամադրվում է մարդասիրական օգնության շրջանակներում, մյուս մասը՝ պետական գնումների, և արդյո՞ք ձեռք է բերվում մարդասիրական օգնության շրջանակներում տրամադրվող միևնույն դեղամիջոցի միևնույն երկրի միևնույն ընկերության արտադրանքը:

Պատասխանը ստանալուց հետո իրականացվել է ոլորտը կարգավորող իրավական դաշտի մոնիթորինգ և համեմատական վերլուծություն նախկինում գործած և այդ պահին ուժը կորցրած իրավական ակտերի հետ:

Օրենքով կամ ենթաօրենսդրական իրավական ակտերով կարգավորվող սպառողների իրավունքների վերաբերյալ տեղեկատվություն է տարածվել սոցիալական ցանցերում ինչպես ուղիղ տեքստերով, այնպես էլ քննարկումներ կազմակերպելու և մեկնաբանությունների միջոցով: Նյութերը պարբերաբար տարածվել են ավելի քան 50 խմբերում և քննարկումներին մասնակցել են ավելի քան 200 օգտատերեր (հղղումների միմասը բացակայում է, քանզի կազմակերպության բոլոր անդամների ֆեյսբուքյնա էջերը փակվել են և այդ գրառումներն այժմ անհասանելի են, հասանելի լինելուն պես հավելյալ կտրամադրվեն նաև այդ հղումները)

[https://www.facebook.com/permalink.php?story\\_fbid=390548837817140&id=128887147316645](https://www.facebook.com/permalink.php?story_fbid=390548837817140&id=128887147316645)

[https://www.facebook.com/permalink.php?story\\_fbid=390933027778721&id=128887147316645](https://www.facebook.com/permalink.php?story_fbid=390933027778721&id=128887147316645)

Իրականացվել են հետազոտություններ նախապես մշակված մեթոդաբանության հիման վրա՝ կեղծ պատահական ընտրանքով՝ պոլիկլինիկա հաճախող կանայք և տղամարդիկ՝ թվով 105 հարցաթերթիկայն հարցում և թվով 59 որակական հարցազրույց: Հետազոտությունն իրականացվել է թվով 15 երևանյան պոլիկլինիկաներում (որակական՝ 17 բժիշկ, 13 այցելու, քանակական՝ 68

այցելու), 3 մանկական բուժհաստատություններում և բաժանմունքներում (որակական՝ 5 բժիշկ, 6 այցելու՝ ծնող, քանակական՝ 17 այցելու՝ ծնող), 1-ական Արագածոտնի և Արարատի մարզի պոլիկլինիկաներում, մանկական բուժհաստատություններում և բաժանմունքներում (որակական՝ ընդհանուր՝ 8 բժիշկ, 10 այցելու, քանակական՝ 20 այցելու՝ ծնող):

Իրականացվել է հաճախ հանդիպող խնդիրների դասակարգում և առանձնացվել այն պրոբլեմները, որոնք կարող են ծնել կոռուպցիոն ռիսկեր:

Իրավական դաշտի մոնիթորինգի համեմատական վերլուծությունների, առանձնացված պրոբլեմների, վերջիններիս պատճառների ուսումնասիրության հիման վրա իրականացվել են համեմատական վերլուծություններ տարբեր երկրներում առկա փորձերի հետ՝ հաշվի առնելով, որ տարբեր երկրներում պետպատվերի շրջանակներում դեղորայքի տրամադրման ընթացակարգերը տարբեր են:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մեր երկրում հաճախ առաջանում են պրոբլեմներ նաև՝ ելնելով մամուլում առկա հրապարակումների, մասնավորապես քաղաքացին չի ցանկանում օգտվել դեղամիջոցից (հարցվածների 14 %), քանզի վերջինիս հետ կապված լինում է աղմուկ, ինչն էլ իր հերթին առաջացնում է բազում խնդիրներ և հաշվի առնելով հատկապես այս առանձնահատկությունն ու նույն սպառողների ցանկությունը (հարցվածների 78 %)՝ նպատակահարմար է, որպեսզի դեղորայքի փոխարեն տրամադրվի յուրաքանչյուր դեղորայքի համար պետության կողմից նախօրոք սահմանված գումարը և սպառողն ինքնուրույն կամ իրեն բուժող բժշկի հետ որոշի, թե նույն դեղամիջոցի որ ընկերության և/կամ երկրի արտադրանքից օգտվի: Առաջարկը ներկայացվել և բանավոր քննարկվել է նաև Առողջապահության նախարարությունում՝ հաշվի առնելով, որ մի շարք օրենսդրական նախագծերում պրոբլեմներից որոշներն ուղղակիորեն լուծում են ստանում, նպատակահարմար է գտնվել ընդարձակ քննարկում անցկացնել բոլոր շահագրգիռ կողմերի հետ, մինչև ս.թ. դեկտեմբեր ամիսը:

Հետազոտության արդյունքների վերլուծությամբ դուրս են բերվել հիմնական հետևյալ խնդիրները, որոնք կարող են պարունակել կոռուպցիոն ռիսկեր՝

- Այցելուն չի ցանկանում օգտվել անվճար տրամադրվող դեղամիջոցից և վերցնում է միայն այն պատճառով, որպեսզի դուրս չմնա ցանկից:
- Դեղորայքը բացակայում է և քաղաքացու համար մնում է անհասկանալի, թե ինչու:
- Հաճախ լինում են դեպքեր, երբ բուժհաստատությունն աշխատելով տարածքի դեղատան հետ՝ պոլիկլինիկա չայցելող քաղաքացու, ում օրենքով հասանելի է անվճար դեղամիջոցը, օգնությամբ ձեռք է բերում

դեղորայքը և հետագայում շուկայականին ավելի ցածր գնով վաճառում դեղորայքի կարիքն ունեցող այլ քաղաքացու: Նշյալ խնդիրն իհարկե ցածր տոկոս է կազմում, սակայն այնուամենայնիվ առկա է:

- Չնայած քաղաքացուն դեղորայքն օրենքով սահմանված կարգով պետք է տրամադրվի անվճար կամ պետք է փոխհատուցվի դեղորայքի համար վճարված վճարը, այդուհանդերձ հաճախ խնդիր է առաջանում՝ պայմանավորված դեղամիջոցի գնով և, ի դեպ, շատ հաճախ խնդիրը լուծվում է, երբ սպառողը բողոքում է տարբեր ատյաններ: Սակայն խնդիր լուծումը ըստ էության հանրային աղմուկից խուսափելն է:

Նշյալ խնդիրների լուծումը Կազմակերպությունը տեսնում է հետևյալ կերպ.

- Սահմանել, թե որ հիվանդության դեպքում որքան է կազմում այն առավելագույն գումարը, որը պետությունն ի վիճակի է տրամադրել:
- Սահմանել յուրաքանչյուր դեղամիջոցի համար իրատեսական գին, որը քաղաքացուն տրամադրելու դեպքում կերաշխավորի դեղամիջոցի ձեռքբերման հնարավորությունը:
- Քաղաքացիներին տրամադրել գումարը, որպեսզի վերջինս ինքնուրույն որոշի, թե որ ընկերության արտադրանք հանդիսացող դեղամիջոցից օգտվի:

Առողջապահության նախարարության ներկայացուցիչների հետ քննարկման ընթացքում վերջիններս ներկայացրել են գումարը քաղաքացուն տրամադրելու ռիսկերը՝ մասնավորապես նշելով, որ քաղաքացին հաճախ, գտնվելով սոցիալ-տնտեսական վատ իրավիճակում, գումարը կարող է ծախսել այլ նպատակով: Մեր կողմից առաջարկվել է նաև հավելել պահանջ, որպեսզի քաղաքացին ներկայացնի դեղորայքի գնումը հաստատող փաստաթուղթ, որպեսզի հնարավորություն ստանա շարունակելու օգտվել տրամադրվող արտոնություններից:

Սույն առաջարկությունը Առողջապահության նախարարությանը ներկայացվելու է նաև գրավոր՝ համապատասխան քննարկումների ավարտից հետո, իսկ մերժողական պատասխանի դեպքում ներկայացվելու է ՀՀ կառավարությանը, քանզի խնդրի լուծումը ոչ թե օրենքի, այլ ենթաօրենսդրական ակտերի փոփոխության մեջ է :

Հրավիրվել է մամուլի ասուլիս Իրականացված ուսումնասիրությունների, կատարված աշխատանքների, հայտնաբերված պրոբլեմների, հնարավոր կոռուպցիոն ռիսկերի և պատկան կառույցի դիրքորոշման վերաբերյալ: Ասուլիսին մասնակցել են ինչպես էլեկտրոնային և տպագիր մամուլի ներկայացուցիչներ, այնպես էլ հեռուստաընկերությունների ներկայացուցիչներ: Ստորև՝ հրապարակումների և ռեպորտաժների հղումները՝

<http://www.armworld.am/detail.php?paperid=5129&pageid=157082&lang=>

<http://www.aysor.am/am/news/2015/07/31/%D5%A2%D5%A1%D5%A2%D5%AF%D5%A5%D5%B6-%D5%BA%D5%AB%D5%BA%D5%B8%D5%B5%D5%A1%D5%B6/982113>

<http://www.tert.am/am/news/2015/07/31/babken-pipoyan/1751880>

[http://henaran.am/news\\_view.php?post\\_id=65588](http://henaran.am/news_view.php?post_id=65588)

[http://www.iravunk.com/index.php?option=com\\_content&view=article&id=29002:-l-r&catid=41:lurer&Itemid=57](http://www.iravunk.com/index.php?option=com_content&view=article&id=29002:-l-r&catid=41:lurer&Itemid=57)

<http://news.am/arm/news/279518.html>

<http://www.hartak.am/arm/index.php?id=45995>

[https://www.youtube.com/watch?v=f-L2\\_b-h\\_n4](https://www.youtube.com/watch?v=f-L2_b-h_n4)

<http://www.armradio.am/hy/2015/07/31/%D5%BA%D5%A5%D5%BF%D5%BA%D5%A1%D5%BF%D5%BE%D5%A5%D6%80%D5%B8%D5%BE-%D5%A4%D5%A5%D5%B2%D5%A5%D6%80%D5%AB-%D5%BF%D6%80%D5%A1%D5%B4%D5%A1%D5%A4%D6%80%D5%B8%D6%82%D5%B4%D5%A8-%D5%B0%D5%A1%D5%B4%D5%A1/>

<http://www.barometer.am/news/top-news/20150309/4830/>

<http://yerevan.today/all/health/3971/vo-r-depkum-en-anvchar-kam-zeghchvac-degher-tramadrum>